ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ

ՀՐԱՄԱՆ № 99-Լ

«22» 11 2023 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը:

Ընդունված ռազմավարության և գործողությունների ծրագրի հիմնական կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ կառավարության հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումն է, հակակոռուպցիոն բարեփոխումների շարունակականության և ստանձնած միջազգային կոնվենցիոն պարտավորությունների և հանձնարարականների ապահովումը:

Հիմք ընդունելով հիշյալ գործողությունների ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների և միջոցառումների

ժամանակին և պատշաճ մակարդակով իրականացնելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների իրականացման համար նշանակել պատասխանատու ստորաբաժանումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի հավելվածի առանձին տողերում նշված առաջին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին՝ մյուս պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների հետ (առկայության դեպքում) մշակել աշխատանքային ժամանակացույց այնպես, որ հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը, վերոհիշյալ իրավական ակտերով նախատեսված՝ ՀՀ դատախազության կողմից շահագրգիռ պետական մարմիններ տեղեկատվության տրամադրման վերջնաժամկետից առնվազն երկու շաբաթ առաջ, ներկայացվի ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

3. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝ ապահովել ստացված տեղեկատվության համակարգումը և սահմանված ժամկետներում տրամադրումը շահագրգիռ պետական մարմիններին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի,

Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ գլխավոր դատախազի 2023 թվականի
նոյեմբերի -ի N հրամանի

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ			
Գործողությունների ծրագրի համապատասխան կետը	**Բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Պատասխանատու ստորաբաժանումը**
Գործողություն 1.6	Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության առկա գործիքակազմը	2024-2025թթ.	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Ք. Գաբուզյան, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար
Գործողություն 2.3	Իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության գործունեության թվայնացմանն ուղղված միջոցներ	2025-2026	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար
Գործողություն 2.4	Անցկացնել կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով մասնագիտական վերապատրաստումներ և	2024-2026թթ.	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ

	պատրաստումներ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազների համար		հսկողության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի օգնական Լ. Բեգոյան
Գործողություն 2.5	Իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի և դրանց քննչական ենթակայության վերանայում	2025-2026թթ.	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Ք. Գաբուզյան
Գործողություն 2.6	Մշակել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ	2024թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Ք. Գաբուզյան
Գործողություն 2.7	Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների	2024-2025թթ.	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար
Գործողություն	Սահմանել կոռուպցիոն	2024թ.-ի 2-	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ

2.11	հանցագործությունների վիճակագրության միասնական կարգ և կատարելագործել առկա կառուցակարգերը:	որդ կիսամյակ-2026թ.	հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ,
Գործողություն 2.13	Կատարելագործել և արդիականացնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը:	2024թ.-ի 2-որդ կիսամյակ-2026թ.	ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ
Գործողություն 2.14	Կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը:	2024թ.-ի 2-որդ կիսամյակ-2026թ.	ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ
Գործողություն 2.15	Մշակել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ մեթոդիկա և ուղեցույցներ, անցկացնել մասնագիտական վերապատրաստումներ	2025թ.	ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներ Լ. Բեգոյան, Ք. Գաբուզյան
Գործողություն 2.16	Ընդլայնել և արդիականացնել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային և անդրազգային հարթությունում կոռուպցիայի	2025թ.	ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական

	հակազդման մեխանիզմները, ինչպես նաև կատարելագործել միջազգային փոխօգնության մեխանիզմները:		համագործակցության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Ե. Սաղոյան
Գործողություն 2.17	Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը	2024-2026թթ.	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա. Ժամկոչյան
Գործողություն 2.18	Զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը	2024թ.-ի 2-րդ կիսամյակ-2026թ.	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա. Ժամկոչյան
Գործողություն 2.19	Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը.	2024-2025թթ.	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա. Ժամկոչյան
Գործողություն 2.20	Կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը	2024-2025թ..	ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա. Ժամկոչյան, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Ք. Գաբուզյան
Գործողություն 2.21	Իրականացնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման ազդեցության փորձաքննություն և վերանայել փաստացի վերահսկողություն իրականացնող անձանց պատասխանատվությունը, կիրառվող սանկցիաների համաչափությունը և կոռուպցիոն բնույթի	2025-2026թթ.	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական հանցագործությունների

	հանցագործություններով խրախուսական կառուցակարգերը:		դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Ե. Սաղոյան
Գործողություն 4.15	Կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով շարունակաբար զարգացնել և կատարելագործել ինստիտուցիոնալ կառուցակարգերը և մեխանիզմները	2024թ.-ի 2-րդ կիսամյակ-2026թ.	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական հանցագործությունների դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Ք. Գաբուզյան